ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՖԵՐԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՄՐՑՈՒՅԹ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ
05.02.2021թ.

Տիպ՝ Համայնքային ծառայության թափուր պաշտոններ
Հայտատու՝ ՀՀ Արմավիրի մարզի Ֆերիկի համայնքապետարան
«Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդված

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ֆերիկի համայնքապետարանը հայտարարում է մրցույթ՝ համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետի (ծածկագիր 3.1-1) թափուր պաշտոնը զբաղեցնելու համար.

Առաջատար մասնագետը

ա) աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ կազմում է համայնքի բյուջեի նախագիծը, մասնակցում է տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու վերաբերյալ որոշման նախապատրաստման աշխատանքներին, իրականացնում է հաշվապահական հաշվառման վարման, ամփոփման և ներկայացման աշխատանքները, ապահովում է համայնքի բյուջեի միջոցների նպատակային օգտագործումը,

բ)անհրաժեշտության դեպքում իր լիազորությունների սահմաններում նախապատրաստում և քարտուղարին է ներկայացնում առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնարդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ, մասնակցում է համապատասխան տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների կողմից կազմակերպվող քննարկումներին և այլ միջոցառումներին

գ) Իր կողմից մշակված իրավական ակտերի նախագծերի, ծրագրային փաստաթղթերի և նյութերի փորձաքննության ուղարկելու անհրաժեշտության մասին առաջարկություններ է ներկայացնում քարտուղարին

դ) Իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ

2.Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է ՝

ա) միջնակարգ կրթություն

բ) Հայաստանի Հանրաետության Սահմանադրության ,<<Համայնքային ծառայության մասին>>, <<Տեղական ինքնակառավարման մասին>>, <<Տեղական տուրքերի և վճարների մասին>>, <<Հողի հարկի մասին>>, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> <<Բյուջետային համակարգի մասին>> <<Գույքահարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների, աշխատակազմի կանոնադրության, իր
լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի իմացություն.

գ) անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում

դ) համակարգչով և ժամանակակից տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

Մրցույթը տեղի կունենա 2021 թվականի մարտի 19-ին ժամը՝ 12^{00}-ին, Ֆերիկի համայքապետարանի շենքում

(հասցեն՝ Կոմիտասի փող.շենք 6)

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ֆերիկի համայնքապետարանը հայտարարում է մրցույթ՝ համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետի (ծածկագիր 3.2-2) թափուր պաշտոն զբաղեցնելու համար.

Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ՝

ա) Ենթակա և հաշվետու է աշխատակազմի քարտուղարին.

բ) Աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ մասնակցում է համայնքի բնակիչների, համայնքում առկա անասնագլխաքանակի, համայնքի ենթակա շենք ու շինությունների, ինչպես նաև մեքենաշինական տեխնիկայի հաշվառման աշխատանքներին.

գ) Աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ իրականացնում է աշխատակազմի առջև դրված իր գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի, առաջարկությունների, եզրակացությունների և այլ փաստաթղթերի պահպանության և արխիվացման աշխատանքները.

դ) Իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է ՝

ա) միջնակարգ կրթություն

բ) Հայաստանի Հանրաետության Սահմանադրության ,<<Համայնքային ծառայության մասին>>, <<Տեղական ինքնակառավարման մասին>>, <<Տեղական տուրքերի և վճարների մասին>>, <<Հողի հարկի մասին>>, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> <<Բյուջետային համակարգի մասին>> <<Գույքահարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների, աշխատակազմի կանոնադրության, իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի իմացություն.

գ) անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում

դ) համակարգչով և ժամանակակից տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

Մրցույթը տեղի կունենա 2021 թվականի մարտի 19-ին ժամը՝ 13^{00}-ին, Ֆերիկի համայքապետարանի շենքում (հասցեն՝ Կոմիտասի փող.շենք 6)

Մրցույթին մասնակցելու համար դիմողները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

ե) դիմում՝ մրցութային հանձնաժողովի անունով (ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս),

զ) համայնքային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով այդ պաշտոնն զբաղեցնելու համար քաղաքացու մասնագիտական գիտելիքներիև աշխատանքային ունակությունների տիրապետմանը ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմ(ների), վկայականի(ների պատճենները՝ բնօրինակների հետ միասին,

է) հայտարարությունայն մասին, որ ինքը չի տառապում Հայաստանի Հանրապետության կառավարության 2019թ. փետրվարի 15–ի թիվ 98-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով,

ը) հայտարարություն այն մասին, որ ինքը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ,
թ)արական սեռի անձինք ներկայացնում են նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենները.
զ) մեկ լուսանկար (3x4 չափսի),
ժ) անձնագրի պատճեն
Մրցույթին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրերին և հարցաշարերին ծանոթանաուհամար կարող են դիմել ՀՀ Արմավիրի մարզի Ֆերիկի համայնքապետարան (հասցե՝ հ. Ֆերիկ, Կոմիտաս 6 շենք, և ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություն (հասցեն՝ Աբովյան 71, հեռ. 0237 2 76 49):
Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր ժամը 9:00-ից 17:00-ն, բացի շաբաթ և կիրակի օրերից: Դիմումների ընդունման վերջնաժամկետն է 2021թվականի մարտի 4-ը ժամը 18^{00}: